ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2012թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն՝ <<Դիվելոփմենթ Սուփորթ>> փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Կոզեռն փողոցի հ.11 հասցեում գտնվող 298.06քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 0308.2012թ. հ.03082012-01-1200 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Սուրբ Հովհաննես եկեղեցուն հարող տարածքում գտնվող 298,06քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 03.08.2012թ. հ.03082012-01-1200 վկայական) <<Դիվելոփմենթ Սուփորթ>> ՓԲԸ-ին պատկանող՝ Կոզեռն փողոցի հ.11 հասցեում գտնվող 298.06քմ մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Սուրբ Հովհաննես եկեղեցուն հարող տարածքում գտնվող մակերեսով հողամասի հետ:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 03.08.2012թ. հ.03082012-01-1200 վկայականի համաձայն՝ <<Դիվելոփմենթ Սուփորթ>> ՓԲԸ-ի անվամբ Կոզեռն փողոցի հ.11 հասցեում սեփականության իրավունքով գրանցված է 298.06քմ մակերեսով հողամաս և 97.7քմ մակերեսով բնակելի տուն, որը ամբողջությամբ իրացվել է:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 1-ի հ.347-Ն և 2009 թվականի հ.168-Ն որոշուների համաձայն՝ Սուրբ Հովհաննես եկեղեցուն հարող տարածքում իրականացվող քաղաքաշինական ծրագրերի իրականացման նկատմամբ ճանաչվել է բացառիկ գերակա հանրային շահ և նշված տարածքների ձեռք բերող է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը ի դեմս <<Դիվելոփմենթ Սուփորթ>> ՓԲԸ-ի:

Նշված հատվածում քաղաքաշինական ծրագրերն արդյունավետ կազմակերպելու, հողամասերի մասնատվածությունը և սեպաձևությունը վերացնելու, հողամասերը միավորելու և մեկ միասնական հատակագիծ թողարկելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել <<Դիվելոփմենթ Սուփորթ>> ՓԲԸ-ին, Կոզեռնի թաղամասի հ.11 հասցեում, սեփականության իրավունքով պատկանող հողամասը փոխանակել Սուրբ Հովհաննես եկեղեցուն հարող տարածքում գտնվող նույն մակերեսով հողամասի հետ:

Փոխանակվող 298.06քմ մակերեսներով հողամասերը համարժեք են, համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2) և 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման սխեմայի գտնվում են 3-րդ գոտում, /ծածկագրեր 01-006-505-001, 01-006-505-045/:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 3–րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու <<Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին>> որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ առաջանում է Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու մասին Երևանի քաղաքապետի որոշում ընդունելու անհրաժեշտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ